

## ՀՀ Ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 40/6

13 հոկտեմբերի 2015 թ.

Քննարկվեց «ՄԲ Գրուպ» ՍՊԸ 18.09.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ 07.09.2015 թ-ի թիվ 6107120 ակտի դեմ:

#### **«ՄԲ Գրուպ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.**

Սույն թվականի փետրվարի 4-ին Խաժակ Մելքումյանը հիմնադրել է «ՄԲ Գրուպ» ՍՊԸ-ն, որը զբաղվում է Ռուսաստանի Դաշնությունից փայտանյութի ներմուծմամբ: «ՄԲ Գրուպ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև ընկերություն) համարվում է շրջանառության հարկ վճարող, իսկ եռամսյակային շրջանառությունը դեռևս չի անցնում 5,5 մլն դրամի շեմը:

Օգոստոս ամսին Խաժակ Մելքումյանի Ռուսաստան մեկնելու կապակցությամբ 31.07.2015 թ-ին պետ. ռեգիստրում կատարվել է տնօրենի փոփոխություն:

Սույն թվականի օգոստոս ամսին Շենգավիթի հարկային տեսչությունից ստացվել է հեռախոսազանգ՝ ներկայանալու պահանջով: Հաշվապահական նեղ մասնագիտական հարցերից խուսափելու համար ընկերության տնօրենը խնդրել է իր եղբոր ուսանողական ընկերոջը՝ Հայկ Պողոսյանին, ուղեկցել իրեն: Վերջինիս խորհուրդով այդ այցի համար կազմել են լիազորագիր, որով ընկերության տնօրենը լիազորել է Հայկ Պողոսյանին իր փոխարեն պատասխանել հաշվապահական հարցերին և ներկայացնել իր շահերը: Սակայն նշված լիազորագիրը ՀՏ-ում չպահանջվելու հետևանքով չի ներկայացվել: Տեսուչներին բավարարել է տնօրենի բանավոր պատասխանը, որ եկել է եղբոր ընկերոջ հետ, որը մասնագիտությամբ հաշվապահ է:

ՀՏ-ում պարզվել է, որ տնօրենին կանչել են, որպեսզի չգրանցված աշխատողի ակտ ձևակերպեն: Նրան հարցրել են, թե ինչպես է կազմակերպվում փայտի բեռնաթափման և վաճառքի աշխատանքները, և կան արդյոք չգրանցված աշխատողներ: Տեսուչներին պարզաբանվել է, որ բեռնաթափումը կատարվում է երեք եղբայրներով, իսկ վաճառքն իրականացվում է գնորդի հետ համատեղ ուժերով: 40 մ<sup>3</sup> փայտը, որը կազմում է մեկ բեռնատար, երեք եղբայրներով դատարկում են մոտավորապես 6-7 ժամում: Նշված բացատրությունը մանրամասն քննարկվել է, պատասխանվել է բոլոր առաջադրված հարցերին: Առաջարկվել է նաև այցելել և տեղում ստուգել իրողությունը: Սակայն այնուամենայնիվ առաջարկվել է մեկ չձևակերպված աշխատողի փաստ արձանագրել: Նշված առաջարկն ընկերության կողմից մերժվել է:

Մի քանի օր անց հարկային տեսուչ Ռ.Հակոբյանը հեռախոսով պահանջել է գործող տնօրենի և Խաժակ Մելքումյանի աշխատանքային պայմանագրերը: Պայմանագրերը ներկայացվել են ՀՏ, սակայն Ռ.Հակոբյանը հայտնել է, որ դրանք այլևս հարկավոր չեն: Այդ օրը հարկային տեսչությունում Ռ.Հակոբյանը և Կ.Գրիգորյանը առանց որևէ ապացույցներ ներկայացնելու առաջարկել են մեկ

չգրանցված աշխատողի համար ակտ ձևակերպել, որի հետևանքով ընկերության 45000 դրամի գերավճարը կհաշվանցվի:

Ըստ գանգատի, ընկերության գործունեության վայրում ոչ մի չգրանցված աշխատող կամ որևէ այլ մարդու ներկայության և ֆիզիկական անձանց եկամուտների վճարման փաստ չի արձանագրվել:

Կարճ ժամանակ անց փոստով ստացվել է ակտի նախագիծը, ինչ-որ արձանագրություն, որում սխալ է գրված տնօրենի ազգանունը, և հարկային վճարումների հաշվետվություն, որոնց մեջ անհիմն ու առանց ապացույցների գրվել է Հայկ Պողոսյանի անունը: Նշված փաստաթղթերում Հայկ Պողոսյանը դիտվել է որպես չգրանցված աշխատող, որի համար առաջադրվել է 60.000 դրամի տուգանք:

Ըստ գանգատի, Հայկ Պողոսյանը չի հանդիսանում ընկերության հաշվապահը, պատասխանատու չէ ընկերության ֆինանսական և հաշվապահական հարցերի համար: Ընկերության հաշվապահական և այլ հարցերով միշտ զբաղվել է Խաժակ Մելքոնյանը:

Հարկային տեսուչները չկարողանալով արձանագրել որևէ չգրանցված վարձու աշխատող, ստիպված արձանագրել են տնօրենի հետ ՀՏ ներկայացած անձին:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է անվավեր համարել ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ 07.09.2015 թ-ին կազմած թիվ 6107120 ակտը:

### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետի 12.08.2015 թ-ի թիվ 6107120 հանձնարարագրի համաձայն «ՄԲ Գրուպ» ՍՊԸ-ում իրականացվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ 07.09.2015 թ-ի թիվ 6107120 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 60.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ընկերությունում 27.08.2015 թ-ին ժամը 17:00-ի դրությամբ թվով 1 վարձու աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված չէր: Խախտվել են ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին կետի և 85-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, որի համար կիրառվել է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված տուգանքը՝ գումարով 60.000 դրամի չափով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

...

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում»:

Քննարկվող դեպքում եկամտային հարկի գծով Ակտով լրացուցիչ պարտավորություններ առաջադրվելու պայմաններում ընկերության համար առկա են

ոչ բարենպաստ փաստական հանգամանքներ: Հետևապես, Ակտի 1-ին կետով արձանագրված խախտման ապացուցման պարտականությունը կրում է ստուգող մարմինը՝ ի դեմս ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց:

Գանգատի քննարկման ընթացքում ստուգումն իրականացրած պաշտոնատար անձի կողմից ներկայացվեցին այն ապացույցները, որոնք հիմք են հանդիսացել Ակտի 1-ին կետում նշված խախտումն արձանագրելու համար:

Ներկայացված ապացույցների ուսումնասիրությամբ Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ դրանք բավարար չեն Հայկ Պողոսյանին ընկերությունում որպես ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպված վարձու աշխատող դիտարկելու համար: Մասնավորապես, ստուգմամբ Հայկ Պողոսյանը դիտվել է որպես ընկերությունում փաստացի հաշվապահի աշխատանք կատարող վարձու աշխատող, որի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված չէ: Սակայն, ստուգման ընթացքում, ըստ էության, չի արձանագրվել որևէ փաստ, որը կհիմնավորեր Հայկ Պողոսյանի կողմից ընկերությունում հաշվապահի աշխատանք իրականացնելու հանգամանքը:

Վերոգրյալից հետևում է, որ եկամտային հարկի գծով պարտավորությունն Ակտով առաջադրվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի պահանջների խախտմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի դրույթներով, որի համաձայն անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, Հանձնաժողովը գտնում է, որ գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

## ո Ր Ո Ղ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ 07.09.2015 թ-ի թիվ 6107120 ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ